

ՈՐՊԵՏ ՀԱՆԳՈՒՅՑ ԿԻՐԱՌՎՈՂ ԲԱՅԵՐԸ ԲԱՂԱԴՐՅԱԼ ՍՏՈՐՈԳՅԱԼՈՒՄ

(ըստ անգլերենի և հայերենի զուգադրական վերլուծության)

ԷՄՄԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Բաղադրյալ ստորոգյալում որպես հանգույց կիրառվող բայերն ուսումնասիրության առարկա են եղել արտասահմանյան և հայրենական լեզվաբանության մեջ, սակայն չեն ստացել բավարար լուսաբանում, տարբեր ձևով են մեկնաբանվել լեզվաբանների կողմից: Հատկապես պարզ չէ դրանց առանձնացման ու դասակարգման հարցը: Ըստ քերականացման աստիճանի, անգլիագետ և լեզվաբաններն այդ բայերը բնութագրում են տարբեր տերմիններով, ինչպես՝ իրիվ ստորոգման և ոչ լրիվ ստորոգման բայեր (verbs of complete and incomplete predication), լիմաստ բայեր [notional, copulas of full (lexical) meaning], թերիմաստ և օժանդակ (semiauxiliary and structural)¹, ինքնուրույն, օժանդակ և կիսաօժանդակ բայեր (independent, auxiliary and semiauxiliary verbs)², իմաստային, օժանդակ և կապակցող (notional, auxiliary and link-verbs)³, վերացական, մաքուր կամ ժայրահեղ քերականացված հանգույցներ (pure or maximally grammaticalized copulas)⁴:

Ըստ լեզուների քերականական կառուցվածքների, որպես հանգույց կիրառվող բայերի թիվը տարբեր է: Ժամանակակից անգլերենում հաշվվում են մոտ վաթսուն բայ, որոնք կարող են որպես հանգույց կիրառվել բաղադրյալ ստորոգյալում: Այս բայերն առաջացել են լիմաստ բայերից՝ բովանդակության վերացարկման և մասնակի քերականացման հիման վրա: Որպես հանգույց կիրառվող բայերն ունեն երկու իմաստ՝ ստորոգման հատկանիշի իմաստ և բառիմաստ: Օ. Ախմանովան գտնում է, որ իբրև հանգույց կիրառվող բայերում երկու նշանակությունը՝ և՛ նյութական, և՛ քերականական, գործում են միաժամանակ: Ըստ Ա. Սմիռնիցկու⁵, բայ-հանգույցի դեր կարող են կատարել ինչպես թուլացած բառիմաստային նշանակությամբ օժանդակ բայերը բաղադրյալ անվանական ստորոգյալում (непроцессно-квалификативное сказуемое), այնպես էլ լիմաստ բայերը պրոցեսսային-որակողական (процессно-квалификативное сказуемое) կամ կրկնակի ստորոգյալում (double predicate): Արտասահմանյան լեզվաբաններից շատերը գտնում են, որ բայ-հանգույցը լրիվ զրկված է բառիմաստային նշանակությունից, դատարկ բառ է և սոսկ քերականական դեր է կատարում⁶: Սովետական լեզվաբանները կար-

¹ O. Jespersen, *Essentials of English Grammar*, London, 1933, p. 66, 114; А. И. Смирницкий, *Синтаксис английского языка*, М., 1957, с. 126; В. Н. Жигadlo, *Современный английский язык*, М., 1956, с. 253.

² М. А. Ganshina and N. М. Vasil'evskaya, *English Grammar* М., 1964, p. 120.

³ V. L. Kaushanskaya a. o., *English Grammar*, L., 1973, p. 232; Б. А. Ильиш, *Строй современного английского языка*, Л., 1971, с. 207.

⁴ Л. Л. Иофис, *Структурный синтаксис английского языка*, Л., 1972, с. 58.

⁵ О. С. Ахманова, *Словарь лингвистических терминов*, М., 1966, с. 89, 104, 396.

⁶ А. И. Смирницкий, *Ելմ.*, էջ 118:

⁷ G. Gurme, *Syntax*, Boston, 1931, p. 20; O. Jespersen, *Ելմ.*, էջ 125; J. C. Nesfield, *Manual of English Grammar and Compositions*, London, 1944, p. 126.

ծում են, որ հանգույցը միշտ որոշ շահով պահպանում է իր կոնկրետ բառի-մասերը⁸, Ըստ Վ. Ցարցևայի «որպես հանգույց կիրառվող ծայրահեղ քերականացված բայը դատարկ բայ չէ, քանի որ արտահայտում է քերականական որոշակի նշանակություն և դեռ ավելին՝ վիճակի, վերածման և լինելության կարգ»⁹, քերականագիտության մեջ առանձնացվում է «լինել» բայի երկու տարբեր նշանակություն: Այն դիտում են կամ որպես հանգույց, օժանդակ բայ, նույնության քերականական ցուցիչ՝ անվանական նախադասություններում, կամ որպես գոյության վերադիր, լինմաստ բայ՝ երկանդամ նախադասություններում, ինչպես՝ «X կա», «X գոյություն ունի»: «Լինել» բայի հիմքում ընկած է այս երկու բոլորովին տարբեր կառույցների դիալեկտիկական համատեղ գոյակցությունը¹⁰:

Ինչպես շատ լեզուներում, այնպես էլ անգլերենում *be* «լինել» բայն օգտագործվում է և՛ իր նյութական, ինքնուրույն նշանակությամբ, և՛ որպես ոչ ինքնուրույն՝ հանգույց, օժանդակ բայ: Իր նյութական, ինքնուրույն՝ միջուկային (kernel) կիրառությամբ *be* բայն արտահայտում է լինելություն, առկայություն, նույնություն, մի տեղ գտնվելու, մի վիճակի մեջ լինելու նշանակություն, ինչպես՝ «My best pictures are in Paris», he said (Gr., Gr., 189) — Իմ ամենալավ նկարները Փարիզում են, — *ասաց նա*, St. John was seldom in the house (Ch. Br., 503) — Մենտ Ջոնը հազվադեպ էր տանը լինում:

Նշված նախադասություններում *are*-ը և *was*-ը որպես *be* բայի ներկա և անցյալ ձևեր, նախադասության ինքնուրույն անդամ են՝ ստորոգյալ, և, հետևաբար, ունեն նյութական նշանակություն: Սակայն վերջերս շատ հետազոտողներ այն կառույցներում, որտեղ ստորոգելի տեղային (լոկատիվ) արտահայտություն ունի, բայը դիտում են իբրև «ձևական բայ»¹¹: Նախդրավոր արտահայտությունը, որը բնորոշում է նախադասության սուբյեկտը, օժանդակ բայով զուգորդված պարագա է: *Are in Paris* և *was in the house* կառույցները այդ լեզվաբանները դիտում են որպես բաղադրյալ ստորոգյալներ: Մեր կարծիքով, այդպիսի կառույցները պարզ բայական ստորոգյալներ են:

Ժամանակակից անգլերենում *be* «լինել» բայի զանազան կիրառություններից ամենակենսունակը հանգույցինն է: Իր լայն օգտագործման շնորհիվ *be*-ն համարվում է ամենավերացական բայը, որը, հակադրվելով մյուս բայ-հանգույցներին, արտահայտում է ստորոգման ամենաիդեալական դեպքը: Որպես հանգույց կիրառվող *be* բայում իմաստի որևէ հավելում չի նկատվում: Այն լրիվ կորցրել է իր ինքնուրույն նշանակությունը և կոչվում է «մաքուր հանգույց» (pure link verb — чистый связочный глагол): Լեզվաբանության մեջ բաղադրյալ ստորոգյալի բայը՝ բայ-հանգույցը, բնորոշվում է որպես link-verb, copula, որն արտահայտում է դեմքի, թվի, ժամանակի, կերպի, խոնարհման, երբեմն էլ սեռի բայական կարգեր, քերականորեն իրականացնում է կապը ենթակայի և ստորոգելիի միջև: Իբրև հիմնական բայական հանգույց *be*-ն միայն քերականական դեր է կատարում և զուգորդվում է ցանկացած ստորոգելիի հետ: Անգլիական գեղարվեստական գրականության փաստական հարուստ նյութից

⁸ О. Ахманова, Patterns and Productivity, М., 1973, p. 114; В. Н. Ярцева. Исторический синтаксис английского языка, М.—Л., 1961, с. 68; А. И. Смирницкий, *Եզվ. աշխ.*, էջ 124:

⁹ В. Н. Ярцева, *Եզվ. աշխ.*, էջ 68:

¹⁰ Э. Бенвенист, Общая лингвистика, М., 1974, с. 203.

¹¹ А. И. Смирницкий, *Եզվ. աշխ.*, էջ 118; И. А. Кузнецова, Глагол «To be» в современном английском языке как глагол связка и как самостоятельный глагол («Ученые записки, Серия филологических наук», вып. 13, № 5 (9), Уфа, 1963, с. 21); J. V. M. Verhaar, The Verb «be» and its synonyms, Boston, 1973, p. 24—30.

ընտրված մեր օրինակներում և դրանց հայերեն համարժեքներում *be* բայն ա-
վելի շատ զուգորդվում է ածականի հետ (*be+Adj.*)՝ 639 անգամ, գոյականի
հետ (*be+N*)՝ 444, դերբայի հետ (*be+Part II*)՝ 81, համեմատաբար ավելի
քիչ է հանդիպում խոսքի այլ մասերի հարադրությանը: Այն փոխանցվում է
հայերենին եմ, լինեմ բայ-հանգույցով, նույն շարահյուսական կաղապարով,
և բաղադրյալ ստորոգյալը պահպանվում է երկու լեզվում, ինչպես՝ *They are*
diplomatic parcels (Gr. Gr., 83)—Դրանք դիվանագիտական ծախքոցներ են,
«No, he *isn't*, *hurt*», Big Chris said (W. S., 92)—Ո՛չ, վիրավորված չե,
—ասաց Մեծ Քրիստը, *The pearl was large* (J. St., 131)—Մարգարիտը
խոշոր էր: Նշված օրինակներն արտահայտվում են շարահյուսական հետևյալ
կաղապարով

$$\text{ԱՅԳ-Լ V} + \begin{cases} \text{N} \\ \text{Adj.} \\ \text{Part. II} \end{cases} = \text{ՀԱՅ.} \begin{cases} \text{N} + \text{ԵՄ, ԼԻՆԵՄ} \\ \text{Adj.} + \text{ԵՄ, ԼԻՆԵՄ} \\ \text{Part. II} + \text{ԵՄ, ԼԻՆԵՄ} \end{cases}$$

Հայտնի է, որ շատ բայեր կիրառվում են օժանդակ բայի պաշտոնով (*auxiliaries*): Օժանդակ բայն առաջացել է համապատասխան խոնարհվող ձևե-
րից՝ անորոշ, ներկա, անցյալ դերբայներից: Օժանդակ բայի դերով կիրառվում
են այնպիսի բայեր, որոնք ցույց են տալիս գործողության սկիզբ, ընթացք և
ավարտ (*begin, continue, finish*) և եղանակավորիչ բայեր, որոնք օգտա-
գործվում են անորոշ դերբայի հետ ու արտահայտում զանազան հատկանիշներ
(*can*—ունակություն, *may*—հնարավորություն, *must*—հարկադրանք, *ought*
to—բարոյական պարտավորություն, *shall, will*—ցանկություն): Ի տարբե-
րություն օժանդակ բայերի, որոնք կորցրել են իրենց բառիմաստը և նախա-
դասության մեջ հանդես են գալիս սոսկ քերականական դերով՝ վերածվելով
ժամանակի, եղանակի ցուցիչի, բայ-հանգույցը կիսով չափ զրկվել է իր բա-
ռիմաստից: Հանգույցի դերով կարող են կիրառվել այն բայերը, որոնք շարա-
հյուսական այլ կառուցվածքում հանդես են գալիս որպես սովորական լիիմաստ
բայեր, ինչպես՝ *Then he grew thirsty and went home*—նա ծառավեց և գնաց
տուն (բայ-հանգույց), *I grow flowers*—ես աճեցնում եմ ծաղիկներ (լիիմաստ
բայ): Օժանդակ բայն իր մեջ ընդգրկում է բայ-հանգույցի զաղապարը, և հա-
ճախ դրանց հասկացությունները նույնանում են՝ օժանդակ բայ=բայ-հան-
գույց:

Որպես օժանդակ բայ *be*-ն կարող է կազմել վերլուծական ձևեր շարունա-
կական ժամանակներում, կրավորական սեռում և դարձվածքային կառույցնե-
րում, ինչպես՝

Նախունակ. ժամ՝ *John is sitting*—Ձեռք նստած է:

Կրավոր. սեռ՝ *Mary is loved by John*—Մերին սիրվում է Ձերի
կողմից:

Դառնվ. կառույց՝ *John is in love with Mary*—Ձեռք սիրահարված է
Մերիին:

Ժամանակակից անգլերենում *be* բայից բացի իբրև հանգույց բաղադրյալ
ստորոգյալում կարող են կիրառվել զգալի թվով տարբեր բայեր՝ *look*—թվալ, ե-
լակալ, *become*—դառնալ, *get, grow, turn*—դառնալ, վերածվել, *feel*—զգալ,
remain—մնալ, որոնք, փոխելով իրենց հիմնական իմաստը, ձեռք են բերում
նոր նշանակություններ և ստորոգելիի հետ զանազան իմաստային նրբերանգ-
ներ հաղորդում ստորոգյալի ընդհանուր բովանդակությանը: Այս բայերը տար-

բեր ձևով են մոտենում հանգույցի աստիճանին, որոշ շահով ինչ-որ բան են պահպանում իրենց նախնական ինքնուրույն իմաստից և օգտագործվում են ենթական ստորոգելիին միացնելու համար: Որպես սովորական բայեր՝ դրանք ցույց են տալիս գործողություն և վիճակ, որն արտահայտվում է կերպի և սեռի քերականական կարգերում: Բաղադրյալ ստորոգյալում որպես հանգույց կիրառվող «սեմիկոպուլատիվը (կիսաօժանդակը) բայ է, որ կարող է ստեղծել ստորոգելիական երկանդամ (բինոմ)՝ $N+V$ ՝ որտեղ N -ը գոյական կամ ածական է, իսկ V -ն մոտենում է եռ կամ հանգույցի դերում կիրառվող բայերին»¹²: Եթե եռ բայը որպես հանգույց ունի սահմանափակ քերականական ձևեր և միայն վերագրման դեր է կատարում, ապա այս բայերը դասկարգվում են իմաստային ձևերի բազմազանություն և վերագրման հետ միասին արտահայտում վերածման, փոփոխության, թվացողության, անհատատության, հատկանիշի պահպանման և այլ նրբիմաստներ: Այդ պատճառով վերացականությունը այդ բայերի մեջ ավելի քիչ է, քան եռ-ի մեջ:

Որոշ լեզվաբաններ բաղադրյալ ստորոգյալում որպես հանգույց կիրառվող բայերը բաժանում են խմբերի: Ա. Չոբանուն տարբերում է շարահյուսական երեք դիրք՝ անորոշ, սեմիկոպուլատիվ և կիսաօժանդակ¹³: Վ. Չերնովը օժանդակ «ծԵԿԵ» բայը հակադրում է մյուս կիսաօժանդակ բայերին, դրանք բաժանելով երկու խմբի՝ փոփոխիչ և եղանակավորիչ¹⁴, իսկ Վ. Վերհաարը սեմիկոպուլատիվ բայերը բաժանում է երեք խմբի՝ ըստ ստորոգելիի արտահայտման ձևերի՝ 1. ածական-կոպուլա, 2. գոյական-կոպուլա և 3. տեղային (լոկատիվ) կոպուլա, և օգտագործում է վերը նշված երկանդամները¹⁵: Նման երկանդամներին ենք հանդիպում նաև Վ. Գակի մոտ¹⁶, Ա. Դրազդասկասը և Գ. Միքայելյանը ներկայացնում են մի շարք բայերի իմաստային խմբեր, որոնք կիրառվում են իբրև հանգույց բաղադրյալ ստորոգյալում¹⁷: Մենք գտնում ենք, որ բայ-հանգույցի դերում կարող են հանդես գալ ինչպես թուլացած նյութական նշանակությամբ օժանդակ բայերը, այնպես էլ լիմաստ բայերը և լիովին ընդունում ենք Ա. Սմիրնիցկու այն կարծիքը, որ «յուրաքանչյուր լիմաստ բայ կարող է պատենցիալ կերպով հանդես գալ բայ-հանգույցի դերով, եթե այն միացնում է առարկայի նշանակությունը հատկանիշի նշանակության հետ»¹⁸:

Այժմ տեսնենք, թե ինչ պատկեր ունեն նույն պաշտոնով հանդես եկող բայերը հայերենում: Անգլերենն եռ բայ-հանգույցին հայերենում համապատասխանում են եմ, լինեմ բայերը, որոնք կոչվում են «էական» բայեր¹⁹: Եմ, լինեմ բայերի նյութական նշանակությունը հաճախ թուլանում է և, կիրառվելով իբրև հանգույց զանազան ստորոգելիների հարադրությամբ, սրանք կազմում են բաղադրյալ ստորոգյալ: Այդ բայերի հետ օգտագործված ստորոգելին ցույց է տալիս կայուն, մնայուն, ըստ սկզբի և ավարտի շրջափակվող հատկանիշ, ինչ-

¹² А. И. Чобану, К вопросу о классификации полусвязочных глаголов («Филологические науки», 1978, № 2, с. 72—75).

¹³ Նույն տեղում:

¹⁴ В. И. Чернов, Полужнаменательные связочные глаголы в современном русском языке («Вопросы русского языка», Куйбышев, 1976, с. 71—88).

¹⁵ J. V. M. Verhaar, *ԶԵԿԵ*, էջ 34—30:

¹⁶ В. Г. Гак, Сравнительная типология французского и русского языков, М., 1983, с. 125.

¹⁷ A. Drazdauskas and G. Mikael'an, An Outline of English Syntax, M., 1973, с. 53.

¹⁸ А. И. Смирницкий, *ԶԵԿԵ*, էջ 125:

¹⁹ Ստ. Պալասյան, Քերականություն մայրենի լեզվի, մաս 2, Քիֆլիս, 1884, էջ 151, Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 2, Երևան, 1954, էջ 44, Մ. Աբեղյան, Աշխարհարարի շարահյուսություն, ս. էջմիածին, 1912, էջ 367:

պես՝ — Անտոնիո, ասա ինձ, ո՞վ ես դու (Ն. Դ., 147), Մի այլ էր նա քաշախորհուրդ և գեղեցիկ (Ն. Զ., 590):

Ինչպես անգլերենում՝ *be*, այնպես էլ հայերենում եմ, լինեմ բայերը կարող են կիրառվել ոչ միայն իբրև հանգույց, այլ իրենց նախնական նյութական նշանակությամբ՝ լինելու, գոյություն ունենալու, գտնվելու իմաստով և հանդես գալ որպես ինքնուրույն պարզ ստորոգյալներ, օրինակ՝ ...մրջյունի չափ փոքր մի երկու հոգի դեզի վրա էին (Հր. Մ., 101), ...բայց գիտեմ, որ մասրենին այլևս իր ներսում է (Հր. Մ., 185):

Որոշ լեզվաբաններ տեղի պարագայում, լինեմ կառույցում եմ, լինեմ բայերը դիտում են որպես պարզ ստորոգյալ իր ինքնուրույն, նյութական նշանակությամբ (Ռ. Իշխանյան)²⁰ կամ որպես բաղադրյալ ստորոգյալ²¹։ Մենք համաձայն ենք Ռ. Իշխանյանի կարծիքին։

Ինչպես արդեն նշվեց անգլերենի վերաբերյալ, հայերենում նույնպես եմ, լինեմ բայերից բացի բաղադրյալ ստորոգյալում իբրև հանգույց կարող են կիրառվել մի շարք վերացական՝ դառնալ, թվալ, երևալ, ձևանալ, մնալ, վերածվել, պանել, հանդիսանալ, կարծել, ներկայացնել, համարվել, անվանել և այլ բայեր, որոնք դրսևորում են իմաստային որոշ յուրահատկություններ և հատկապես իրենց վերագրման հետ արտահայտում զանազան նրբիմաստներ (վերածում, փոփոխություն, թվացողություն, անհաստատություն, հատկանիշի պահպանում և այլն), ինչպես՝ նա հայոց բանաստեղծությունը անվանում է հայ ազգի ազնվականության վկայական (Հ. Թ., 331), Մարութին տառօրինակ թվացին մոր համբույրները (Ս. Խ., 66), Մերունին փառացած մնաց և ոչինչ պատասխանել չկարողացավ (Բ., 235), Կյանքը դարձավ հավերժական մի փնտրում (Ն. Զ., 12), Արտաքուստ նա շատ համեստ էր երևում... (Մ., 450):

Ըստ իրենց արտահայտած իմաստային երանգների, Մ. Աբեղյանը վերացական բայերը դասակարգում է երեք խմբի, Ս. Գյուլբուրդյանը՝ յոթ, Ս. Աբրահամյանը, Ն. Պառնասյանը, Հ. Օհանյանը, Խ. Բադիկյանը՝ հինգ²²։ Հիշյալ բայերի մի մասը հանդես է գալիս որպես վերացական, մյուսները պահպանում են իրենց նյութական նշանակությունը և հազվադեպ են վերացարկվում։ Հաճախ դժվար է որոշել, թե տվյալ բայը լիովին է կորցրել իր նյութական նշանակությունը, թե՞ մասամբ, ինչպես՝ նստած էր աթոռին (նյութ. նշ., լիմաստ բայ), նստած էր թագավոր, այսինքն՝ թագավոր էր (վերացական բայ, հանգույց)։ Վերացական և եմ, լինեմ բայերը կազմում են հակադրություն (օպոզիցիա), ինչպես՝ Զեռք տուր, բարեկամներ եմ (Ալ. Շ., 16) — Մենք դարձանք բարեկամներ (վերածում), Ա՛հ, հրաշալի է այդ քաղաքի բնությունը (Ալ. Շ., 4) — Քաղաքի բնությունը հրաշալի էր թվում (թվացողություն), Այդ մարդը ազնիվ էր, արդարասեր, հշմարտախոս (Ալ. Շ., 6) — Այդ մարդը ազնիվ, արդարասեր, հշմարտախոս էր երևում (անհաստատություն), Հայրս անհողորդ էր (Ալ. Շ., 27) — Հայրս մնաց անհողորդ (հատկանիշի պահպանում), Դպրոցի բակը ամայի էր (Հր. Մ., 72) — Դպրոցի բակը կարծես ամայի էր (ձևացողություն)։ Շարադրվածից հետևում է, որ վերացական բայերը բաղադրյալ ստորոգյալում հանդես չեն գալիս սոսկ որպես հանգույցներ։ Դրանք պահպանում են իրենց նյութական նշանակությունը, արտահայտում են զանազան նրբիմաստներ, հարբստացնում լեզվի ոճը։

Սովետական լեզվաբաններ Ա. Սմիռնիցկին, Վ. Ժիգադոն, Ա. Դրազդաուսկասը և ուրիշներ բաղադրյալ ստորոգյալում որպես հանգույց կիրառվող բա-

²⁰ Ռ. Իշխանյան, Ստորոգելիական վերադիրը ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգում («Հայոց լեզու և գրականություն», պր. 3—4, Երևան, 1984, էջ 14):


²¹ «Ժամանակակից հայոց լեզու», հ. 3, կազմեցին՝ Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բադիկյան, Երևան, 1976, էջ 174:

²² Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 376, Ս. Գյուլբուրդյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1978, էջ 264, «Ժամանակակից հայոց լեզու», հ. 3, էջ 159—161:

յերը դասակարգում են չորս հիմնական խմբի, ըստ դրանց շարահյուսական և իմաստային հատկանիշների²³, որին համակարծիք ենք նաև մենք: Այժմ, ըստ այդ դասակարգման, զուգադրական-տիպարանական մեթոդով, անգլիացի հեղինակների ստեղծագործություններից ընտրված օրինակների ընդհանրացումների հիման վրա փորձենք ցույց տալ զուգադրվող երկու լեզուներին բնորոշ շարահյուսական կառուցվածքային կաղապարների տիպարանական նկարագիրը:

ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲ. *Link Verbs of Being*—լինելության բայեր՝ *be*—«լինել», *feel*—«զգալ», *sit*—«նստել», *stand*—«կանգնել», *lie*—«գտնվել»: Այս խմբի բալերը, բացի *be*-ից, որի մասին արդեն խոսվեց, կարող են օգտագործվել որպես բալ-հանգույցներ՝ արտահայտելով վիճակ կամ լինելություն: *Feel*-ը հանդիպում է զանազան ստորոգելիների՝ ածականի, գոյականի, մակբայի, դերբայի, նախդրավոր կապակցության զուգորդությամբ՝ կազմելով *V+ Prep*, *V+ Adj.*, *V+N*, *V+ Adv*, *V+ Part II* երկանդամները: Ըստ մեր հաշվումների, 107 օրինակից *feel* բալը մեծ հաճախականությամբ է հանդես գալիս ածականի հարադրությամբ: Ընտրված 60 օրինակից անգլերենի բաղադրյալ ստորոգյալի կառուցին հայերենում համապատասխանում է ±0 բաղական պարզ ստորոգյալ, մնացած տասը պահպանում է բաղադրյալ ստորոգյալի կաղապարը՝ երկու լեզվով: Ավելի քիչ հաճախականությամբ է հանդիպում *feel*-ի գոյականական և դերբայական կիրառությունը: *Feel+N* 20-ական լերեն բաղադրյալ կառույցին հայերենում համապատասխանում է 18 պարզ շարահյուսական կառույց: *Feel+Part II* 21 դերբայական կառույցից 16-ը հայերենին է փոխանցվում պարզ, մնացածը՝ բաղադրյալ ստորոգյալի կաղապարով, ինչպես՝ *He felt very good, but also very angry* (W. S., 74) — նա իրեն շատ լավ էր զգում, բայց խիստ զայրացած էր, *I felt some sympathy for them* (Gr. Cr., 105) — ինչ-որ համակրանք զգացի նրանց հանդեպ (պարզ ստոր.), *Markus felt embarrassed* (W. S., 236) — Մարկուսը շփոթվեց (պարզ ստոր.), *I feel so astonished* (Ch. Br., 258) — ես այնպես ապշած եմ (բաղ. ստոր.):

Feel բալը, զուգորդված ածական-ստորոգելիի հետ, հայերենում ստանում է երկակի բնույթ: Մի դեպքում *feel-good* բաղադրյալ ստորոգելիական կառույցը հայերենում կազմում է պարզ ստորոգյալ, իսկ *good* ածական-ստորոգելին վերածվում «լավ» մակբայի, մյուս դեպքում՝ *felt-angry* բաղադրյալ կառույցը հայերենում արտահայտվում է դերբայ-եմ, լինեմ բաղադրյալ ստորոգյալի կաղապարով: *Feel+N* կառույցին հայերենում համապատասխանում է պարզ ստորոգյալի կաղապար, անգլերենի գոյական-ստորոգելին վերածվում է հայերենի ուղիղ խնդրի, ինչպես՝



Stand և *sit* բալ-հանգույցներով կազմված կառույցները հազվադեպ են հանդիպում անգլերենում, հայերենին են փոխանցվում պարզ բայական ստոր-

²³ А. И. Смирнички, *Изд. шк., էջ 125*; В. Н. Жигadlo, *Изд. шк., էջ 253*; А. А. Драздаускас, Структура и семантика непроцессного качественного сказуемого в современном английском языке (кандидатская диссертация, М., 1970, с. 91—117).

րողյալի կաղապարով, անգլերեն *still* և *quiet* մակբայ-ստորոգյալները հայերենում վերածվում են «լուռ», «մաքդարա» ձևի պարագայի, ինչպես՝ *Kino stood perfectly still* (J. St., 100) — Գինոն կանգնած էր բոլորովին լուռ: *She sat quiet as a stone* (J. St., 145) — Քարի պես անշարժ նստել էր նա: Նշված օրինակները կազմում են շարահյուսական հետևյալ կաղապարը.

ՆշԳԼ V + Adv. = ՆՆՅ Simple predicate

Անգլերեն և հայերեն լեզուների զուգադրական ուսումնասիրության տրվյալներից գալիս ենք այն եզրակացության, որ եթե անգլերենում որպես հանգույց կիրառվող առաջին խմբի *feel* — «զգալ» բայը պահպանում է անգլերենին բնորոշ իմաստային որոշ նրբերանգներ, հանգես գալով շարահյուսական մակարդակում, ապա նույն զգալ բայը հայերեն համարժեքներում, պարզ ստորոգյալի դեպքում կիրառվում է իր ինքնուրույն բառիմաստով: Երբեմն անգլերենի բարդ շարահյուսական կառույցը կարող է պահպանել նույն կաղապարը հայերենում: Իբրև հանգույց հայերենում զգալ բայը հազվադեպ է կիրառվում, հանգույցի դերը բաղադրյալ ստորոգյալի համար բնորոշ չէ հայերենին:

Feel + Part II, ինչպես նաև *stand* և *sit* բայ-հանգույցների հարադրությունը մակբայի հետ, հայերենի պարզ ստորոգյալի փոխանցվելիս անգլերենի *feel*, *stand* և *sit* բայ-հանգույցներն անհետանում են, իրենց իմաստային հատկանիշները հաղորդելով ստորոգելիին՝ դերբային և մակբային, դրսևորվելով հայերենին բնորոշ եմ, լինեմ բայերի զուգորդությամբ:


ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲ. *Verbs of Becoming* — վերածման բայեր՝ *become* — «դառնալ», *get*, *grow*, *turn*, *feel* — «դառնալ», «վերածվել», *fall* — «ընկնել» *rove* — «ապացուցել», «դառնալ»:

Այս խմբի *become*, *get*, *grow* բայերն արտահայտում են վերադրի հատկանիշի փոփոխություն կամ նոր հատկանիշի ձեռքբերում: Որպես հանգույց *get*, *grow* բայերը ամենաշատ օգտագործվողներն են: Դրանք զուգորդվում են ածականի, անորոշ դերբայի, ինչպես նաև դերանունի հետ, կարող են օգտագործվել որպես լիմաստ բայեր՝ պահպանելով իրենց բառիմաստը: *Turn* բայը սովորաբար զուգորդվում է գույն ցույց տվող ածականների հետ: Որպես հանգույց բաղադրյալ ստորոգյալում կիրառվող բայերի աճը հիմնականում ընթանում է այս խմբի հաշվին:

Become, *grow*, *get*, *turn* վերածման բայերը, որոնք հատկանիշի ձեռքբերումը կամ փոփոխությունը պարունակում են իրենց բուն բայիմաստի մեջ, զուգորդվելով զանազան ստորոգելիների հետ, կազմում են V + Adj., V + N, V + Part II, V + Pron, V + Adv երկանդամները: Ըստ մեր հաշվումների, *become*-ը նյութական-վերադրի հարադրությամբ 28 դեպքից 24-ում հայերենին փոխանցվելիս պահպանվում է բաղադրյալ ստորոգյալի շարահյուսական կառույցը, իսկ ածականի զուգորդությամբ՝ 27-ից 17-ում արտահայտվում է պարզ բայական ստորոգյալի կաղապարով: *Grow*-ի ածականական կիրառության հաճախականությունը կազմում է 25, իսկ դերբայականը՝ չորս դեպք, որոնք հայերենին են փոխանցվում հիմնականում պարզ ստորոգյալի կաղապարով: *Get*-ի զուգորդությունը ածական-ստորոգելիի հետ գերակշռում է մյուս կառույցներին, 26 օրինակից 21-ում հայերենին է փոխանցվում պարզ շարահյուսական կառույցով: Նույնպիսի ածականական կիրառություն ունեն *turn*, *go* բայերը, որոնք հայերենում արտահայտվում են պարզ շարահյուսական կաղապարով:

Prove բայը ստորոգելիի հետ հայերենին փոխանցվում է ածական + եմ, լինեմ հայ-հանգույցով, բաղադրյալ ստորոգյալի կառուցվածքային ձևը համընկնում է երկու լեզվում, ինչպես՝ *We became friends* (M. A., 29) — Բարեկամ դարձանք (բաղ. ստոր.), *The walls had become speechless* (M.

A., 203)—Պատերը պապանգավել էին (պարզ ստոր.), He became absorbed in the game (S. M., 86)—Նա խորասուզվեց խաղի մեջ (պարզ ստոր.), He was growing very stout (J. St., 100)—Նա շատ էր զիրանում, People had grown tired (J. S., 50)—Մարդիկ արդեն հոգնել էին (պարզ ստոր.), You don't get any thinner (J. G., 33)—Դու բոլորովին չես նիհարում, We'll get back (W. S., 242)—Մենք կվերադառնանք (պարզ ստոր.), His lips and cheeks turned white-quite white (Ch. Br., 525)—Նրա շրթունքներն ու ալոսերը գունամվեցին՝ բոլորովին սպիտակեցին, „The whole world's gone crazy „the young man said (W. S., 151)—Ամբողջ աշխարհը գոմվել է,—ասույց երիտասարդը (պարզ ստոր.), Just as in the air-raid it proved impossible to be frightened all the time (Gr. Gr., 134)—Ճիշտ այնպես, ինչպես նույնիսկ օդային ուժակոծության պահին ամենադժվար է անընդհատ սարսափի մեջ լինել... (բաղ. ստոր.): Օգտագործված տվյալները կազմում են շարահյուսական հետևյալ կաղապարը.



Երկու լեզուների զուգադրական վերլուծությունը ցույց է տալիս, որ այս խմբի become—«դառնալ», grow, get, turn, go—«դառնալ», «վերածվել» բայերը ածականի, դերբայի և մակբայի զուգորդությամբ հայերենին փոխանցվելիս վերանում են, իրենց իմաստային նրբերանգները հաղորդելով ստորոգելիին՝ վերածվում պարզ ստորոգյալի։ Հայերեն համարժեքներում պարզ ստորոգյալը պոստրվում է անգլերենի տարբեր ստորոգելիներից կազմված բայահիմքով և եմ, լինեմ բայ-հանգույցով։ Անգլերենի վերլուծական ձևը հայերենում դառնում է համադրական ձև՝ այսինքն բայական մեկ միավոր։


ԵՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ. Link Verbs of Remaining—հատկանիշի պահպանման բայեր՝ remain, stay—«մնալ», keep, hold—«պահել», «մնալ», continue—«շարունակել», begin—«սկսել»։

Այս խմբի բայերը չունեն վերադիրների հետ այնպիսի լայն զուգորդությունների շրջանակ, ինչպես առաջին խմբի բայերը։ Դրանք առավելապես զուգորդվում են ածականների, դերբայների, գոյականների, թվականների և բառակապակցությունների հետ։ Որպես հանգույց կիրառվելով, այս բայերն արտահայտում են իմաստի տեսականություն, ենթակային վերագրում են որևէ հատկանիշ՝ որոշակի ժամանակի տևողությամբ։

Remain բայի կիրառությունը հանգույցի պաշտոնով հանդես է գալիս ոչ մեծ հաճախականությամբ, ավելի շատ հարադրվում է ածական, քան գոյական, դերբայ, մակբայ-ստորոգելիների հետ, որոնք հայերենին են փոխանցվում հիմնականում բաղադրյալ ստորոգյալի կաղապարով՝ ընտրված տասներկու կառույցներից բոլորը։

Keep բայի կիրառությունը՝ որպես հանգույց գոյական և ածական ստորոգելիների զուգորդությամբ, հավասարաչափ է՝ 20 օրինակից վեցի հաճախականությամբ։ Այդ կառույցները հայերենին են փոխանցվում երկակի բնույթով, սակայն բաղադրյալ կաղապարները գերիշխում են պարզ կառույցներին։ Remain, keep, stay բայերը բաղադրյալ ստորոգյալում ստորոգելիի հետ պահպանում են բաղադրյալ շարահյուսական կառույցը երկու լեզվում, հայերենին փոխանցվում են ճարտարապետականորեն՝ լինեմ, երբեմն պարզ ստորոգյալի կաղապարով, իսկ hold բայով կազմված կառույցը անգլերենից հայերենին փոխանցվում է հարադրությամբ և կազմում պարզ ստորոգյալ, ինչպես՝ Strick-


lend remained placid (S. M., 64)—Սթրիքլենդը անտարբեր էր մնում, Soams remained unsatisfied (J. G., 74)—Միայն Սոմսը չբավարարված մնաց (բաղ. ստոր.), Keep him quiet (J. St., 146)—Լռեցրու դրան (պարզ ստոր.), „Well, you do keep busy, don't you? Diana said (W. S., 101)—Դեհ, միշտ շատ զբաղված ես, այնպես չէ՞, —ասաց Դիանան (բաղ. ստոր.), „We'd better stay friends with them“ (M. A., 45)—Ավելի լավ է ընկերներ մնա՞նք նրանց հետ (բաղ. ստոր.), The oldest by some years of all Forsytes she hold a peculiar position amongst them (J. G., 37)—Տարիքով ամենամեծը Ֆորսայթներից մի առանձնահատուկ դիրք ունի նրանց մօշ (պարզ ստոր.): Փաստական նյութի տվյալները արտահայտվում են հետևյալ կաղապարով.




Ինչպես ցույց է տալիս լեզուների քերականական մակարդակների համադրությունը, երրորդ խմբի բայերը հիմնականում պահպանում են իրենց ֆունկցիոնալ-իմաստային հատկանիշները երկու լեզվում: Stay, remain, keep բայերով կազմված բաղադրյալ ստորոգյալի կառույցը պահպանվում է հայերենում համապատասխան մեղավերացական բայի և հայերենին բնորոշ եմ, լինեմ բայ-հանգույցի զուգորդությամբ: Բացառություն է կազմում երբեմն keep «պահել», «մնալ» բայը, որը ածականի հետ հարադրվելով, հայերենում վերածվում է պարզ ստորոգյալի:

ՉՈՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ. Link Verbs of Seeming and Appearing—հատկանիշի թվացողության բայեր՝ seem, look—, «թվալ», appear—«երևալ»: Այս բայերն իրենց նշանակությամբ արտահայտում են եղանակավորման քերականական կարգ, կազմում են զուգորդման լայն շրջանակ: Seem բայը հանգույցի պաշտոնով հարադրվում է հատկապես ածականի հետ: Ընտրված 81 օրինակից V+Adj.-ի հաճախականությունը կազմում է 49, որից 37-ը հայերենին է փոխանցվում բաղադրյալ ստորոգյալի կաղապարով: V+Part II կառույցը հայերենում համապատասխանում է պարզ ստորոգյալի կառույցի՝ 10-ի հաճախականությամբ 8 բաղադրյալ ստորոգյալի հանդեպ: Seem-ի գործառությունը գոյականի և անորոշի հետ ավելի հազվադեպ է, հայերենում արտահայտվում է հիմնականում բաղադրյալ ստորոգյալի կաղապարով: Appear-ը հազվադեպ է հանդես գալիս հանգույցի դերով: Նկատվում են մի քանի կիրառություններ ածականի, անորոշի, գոյականի և դերբայի հարադրությամբ: V+Part II երկանդամը փոխանցվում է հայերենին պարզ ստորոգյալի կաղապարով, իսկ V+Adj. և V+N կառույցները՝ բաղադրյալ: Look բայն իբրև հանգույց հարադրվում է գլխավորապես ածականի հետ: Ընտրված 40 դեպքից 34-ը ածականական է, որից 13-ը հայերենին է փոխանցվում բաղադրյալ ստորոգյալի, 11-ը՝ պարզ ստորոգյալի կաղապարով: Look բայի դերբայական կիրառության 12 օրինակից ութը փոխանցվում է հայերենին բաղադրյալ, իսկ չորսը՝ պարզ ստորոգյալի կաղապարով, ինչպես՝ She seemed to me very nice and gentle (M. A., 26)—Նա շատ պիտուց և մեղմ էր թվում ինձ (բաղ. ստոր.), Blanche seemed a little better (S. M., 133)—Բլանշը համեմատաբար լավ էր զգում իրեն (պարզ ստոր.), I didn't know why she seemed embarrassed (S. M., 106)—Ես չգիտեի, թե ինչու էր նա շփոթվել (պարզ ստոր.), They seemed all Forsytes (J. G., 402)—Նրանք բոլորն էլ

թվում էին ֆորսայթներ (րադ. ստոր.), *Life appears too short* (Ch. Br., 81)—*Կյանքը շատ կարճ է* (բաղ. ստոր.), *The good apothecary appeared a little puzzled* (Ch. Br., 35)—*Բարի դեղագործը երևի մի փոքր շփոթվեց* (պարզ ստոր.), *„You look well, Dad”* (J. G., 57)—*Լավ ես երևում, հայրիկ* (րադ. ստոր.), *She looked frightened* (Ch. Br., 252)—*Երկչոտ աեսք ունեւ* (բաղ. ստոր.): Ընտրված օրինակների հիման վրա կարելի է կազմել շարահյուսական հետևյալ կաղապարը.



Զուգադրելով երկու լեզուների փաստական նյութի տվյալները, գտնում ենք, որ շորորող խմբի որպես հանգույց կիրառվող բայերից *seem*—*սթվալք* բայով կազմված անգլերենի բաղադրյալ ստորոգյալի կառույցները պահպանում են նույն շարահյուսական մակարդակը հայերենում՝ դրսևորվելով թվալ վերացական բայով և գոյականի ու ածականի զուգորդությամբ: *Seem*-ի գործառնությունը *Part II*-ի և ածականի հետ հայերենում արտահայտվում է պարզ բայական ստորոգյալով: Անգլերենի երկու շարահյուսական միավորները հայերենում վերածվում են մեկ շարահյուսական միավորի՝ համադրական ձևի: Փաստական նյութի վերլուծությունն ապացուցում է, որ բաղադրյալ ստորոգյալում իբրև հանգույց կիրառվող բայերի ուսումնասիրությունը զուգադրական-տիպաբանական մեթոդով ըստ դրանց կառուցվածքային-ֆունկցիոնալ առանձնահատկությունների կարելի է արտահայտել զուգադրվող երկու լեզուներին բնորոշ շարահյուսական հետևյալ կաղապարով.



Ինչպես երևում է բերված կաղապարից, անգլերենի և հայերենի համար որպես հիմնական օրինաչափություն պետք է դիտել երկու լեզուների շարահյուսական կաղապարների տարբերությունը: Եթե անգլերենում *be* բայ-հանգույցը և իբրև հանգույց կիրառվող մյուս բայերը նախադաս են ստորոգելիի նկատմամբ, ապա հայերենում նույն կառույցն արտահայտվում է շարադասության փոփոխմամբ, եմ, լինեմ բայ-հանգույցը և մյուս վերացական բայերը ետադաս են ստորոգելիի նկատմամբ, ինչպես՝

$$\text{ԱՊԳԼ V+N} = \text{ՀԱՅ N+V}$$

... *is work*—... սաեղծագործությունն է

... *stay friends*—... բնկերներ մնանք

Այսպիսով, ժամանակակից անգլերենում բաղադրյալ ստորոգյալում որպես հանգույց կիրառվող բայերի քննությունը զուգադրական-տիպաբանական մեթոդով անգլերեն և հայերեն լեզուների համարժեքների հիման վրա ցույց է տալիս, որ ըստ մեր կատարած հաշվումների, ընտրված անգլերեն 308 բաղադրյալ ստորոգյալի օրինակից 174-ը հայերենում վերածվում է պարզ բա-

յական, իսկ 134-ը բաղադրյալ ստորոգյալի: Ընդ որում, Երրորդ խմբի՝ հատկանիշի պահանջման և չորրորդ խմբի՝ թվացողության բայերը ստորոգելիի հարադրությամբ հայերենին փոխանցվելիս բաղադրյալ ստորոգյալի շարահյուսական կառուցվածքային մակարդակները համընկնում են զուգադրվող երկու լեզուներում, մինչդեռ առաջին խմբի՝ լինելության, երկրորդ խմբի՝ վերածման բայերը, ածական-ստորոգելիների զուգորդությամբ հայերենում վերածվում են պարզ բայական ստորոգյալի, շարահյուսական կառույցը արտահայտվում է ձևաբանական միջոցներով: Երբեմն Երկրորդ և երրորդ խմբի բայերը հայերենին փոխանցվելիս անհետանում են, իրենց իմաստային նրբերանգները հաղորդելով ստորոգելիին, վերածվում պարզ ստորոգյալի: Այս ամենից գալիս ենք այն ընդհանուր եզրակացության, որ շնայած բաղադրյալ ստորոգյալի շարահյուսական-կառուցվածքային կաղապարների պահպանման որոշ դեպքերին, անգլերենում որպես հանգույց կիրառվող բայերով կազմված բաղադրյալ ստորոգյալը հայերենում վերածվում է պարզ բայական ստորոգյալի, անգլերենի վերլուծական ձևերին հայերենում համապատասխանում են համադրական ձևեր:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- M. A.—Michael Arlen, The Green Hat, New York.
 Ch. Br.—Charlotte Brönte, Jane Eyre, M., 1958.
 J. G.—John Galsworthy, The Man of Property, M., 1974.
 Gr. Gr.—Graham Green, The Quiet American, M., 1968.
 S. M.—Somerset Maugham, The Moon and the Six Pence, M., 1969.
 W. S.—William Saroyan, The Human Comedy, New York, 1943.
 J. St.—John Steinbeck, The Red Pony, The Pearl, M., 1965.
 Ն. Զ.—Նաիրի Զարյան, Միհատորյակ, Երևան, 1959.
 Հ. Բ.—Հովհաննես Թումանյան, Ընտիր երկեր, հ. 4, Երևան, 1951:
 Ս. Խ.—Սերո Խանդավյան, Հոնոլտա սարի աղչիկը, Երևան, 1958:
 Հր. Մ.—Հրանտ Մաթևոսյան, Մեր վազքը, Երևան, 1978:
 Մ.—Մուրացան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1951:
 Ն.-Դ.—Նար-Դոս, Պատմվածքներ, Վիպակներ, Երևան, 1978:
 Ալ. Շ.—Ալեքսանդր Շիրվանզադե, Իմ կյանքից, Երևան, 1953:
 Ե. Զ.—Եղիշե Զարենց, Ընտիր երկեր, Երևան, 1957:
 Բ.—Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1955:

ГЛАГОЛЫ В ФУНКЦИИ СВЯЗКИ В СОСТАВНОМ ИМЕННОМ СКАЗУЕМОМ

(по сопоставительному анализу английского и армянского языков)

ЭММА САРҚИСЯН

Резюме

В функции связи, как главного предикцирующего компонента в составном именном сказуемом, в современном английском языке самым продуктивным является глагол *be* «быть». Кроме глагола *be* в этой функции могут выступать также другие глаголы, как: *become* «становится», *get*, *grow*, *turn* «превращаться», *look* «казаться», *remain* «оставаться», которые выражают некоторые смысловые оттенки и вместе с предикативным членом обогащают общее содержание всего сказуемого.

Советские лингвисты делят эти глаголы по синтаксическому и смысловому значению на четыре группы.

Сопоставление фактического материала из английской художественной литературы с аналогичными армянскими эквивалентами позволяет составить структурно-синтаксические модели, определяющие конструктивно-функциональную характеристику соответствующих групп глаголов. Несмотря на некоторые случаи сохранения сложных синтаксических конструкций в английском и армянском языках, английское составное сказуемое в основном передается простым глагольным сказуемым, т. е. аналитическим формам в английском языке соответствуют синтаксические единицы в армянском.